

նացա համար կ'ուզէր պատժել զիս ,
թող տալով որ ինծի դէմ այս զրպար-
տութիւններս ըլլուն . համակամու-
թեամբ խոնարհեցուցի ճակատս և մի
անգամ ևս կրկնեցի , Աստուծոյ կամքն
ըլլայ , և նուիրմամբ անձին և համբե-
րութեամբ միտքս զրի որ ամենեւին պա-
տասխան չտամ , բնաւ արդարացուց-
մունք մը յառաջ չբերեմ , և ասանկ սոս-
կալի ամբաստանութեան մը դժնդակ
հետեանքներն քաշեմ :

Աբբան առանց վրդովելու շարունա-
կեց ըսելով .

— Պարոն , դու այս չարագործին տէր
ես . կրնաս ուղածդ ընել : Եթէ պատ-
շաճ կը դատիս , արդարութեան ձեռքը
յանձնէ զինքը . վկայք չեն պակսիր
հաստատելու որ ինքն է բուն գողը :

Պարոնը քիչ մը կենալէն վերջը պա-
տասխանեց . Ես մարդու փաստ չեմ ու-
զեր հասցընել : Արդէն իսկ կորսուած
է ստակս , և ասիկայ կարող չէ նորէն
ինծի դարձընելու զայն , անշուշտ շուայ-
տութեամբ փճացուցած պիտի ըլլայ :
Ես քու իշխանութեանդ կը թողում
զինքը , տէր արբայ . ըրէ իրեն ինչ որ
լաւ կ'երևնայ քեզի . պատժէ զինքը ինչ-
պէս պատշաճ կը համարիս : Իրեն դա-
տաւոր դքեզ կը կարգեմ . տուր ինչ վը-
ճիւ որ արժան կը դատիս :

— Յանձն կ'առնում , կրկնեց ար-
բան : Լսեցիր , ըսաւ ինծի դառնալով .
ինչ ունիս ըսելիք . պատասխան տուր :

Ես սոսկալի ներհակութեան մը մէջ
էի . կ'ուզէի խօսիլ և կ'ուզէի լռել . այն
դժնդակ վայրկենին մէջ մահաբեր պա-
տերաղմ մը կը նեղէր և կը կեղեքէր
զիս : Բայց Աստուած գթացաւ վրաս .
և ես բովանդակ խոնարհութեամբ սրը-
տի՛ Աստուծոյ անքնին դատաստաններն
մեծարելով , զողջոյն և նուաղ ձայ-
նով մը պատասխանեցի .

— Ուրիշ բան չունիմ ըսելու , բայց
թէ Աստուծոյ կամքն ըլլայ .

— Գնա խուղդ քաջուէ . իսկ դուք ա-
մենքնիդ ևս , Պարոններ , այսօր իրի-
կուան ժամերգութենէն ետե ժողովի
հրաւիրուած էք : Հոն իրեն արժանա-

ւոր վճիւր պիտի տրուի , և դուք , պա-
րոններ , անոր անմիջապէս կատարման
դատաւորներն ու միանգամայն հանդի-
սատես պիտի ըլլաք : Գնա ուրեմն :

Հանդարտ հանդարտ սկսայ դէպ ի
խուղս երթալ , ուր հասնելու պէս՝
ծնկան վրայ ինկայ , և գետին խոնար-
հած լալով ու հեկեկալով գոչեցի . Աս-
տուած իմ շնորհակալ եմ որ զիս ար-
ժանի ըրիր քու սուրբ անուանդ հա-
մար նախատինք կրելու :

Կը շարունակուի :

ԵՐՈՒԱՆԴ

Ո Ղ Բ Ե Ր Դ ՈՒ Թ Ի Ի Ն

ԱՐԱՐՈՒԱԾ Ե .

ՏԵՍԻԼ Ա .

ԵՐՈՒԱՆԴ , ԵՐՈՒԱՋ :

ԵՐՈՒԱՆԴ երեւեալ փախչի . զհետ նորա ձայնէ .

Երգ . Կաց ֆնա , եղբայր իմ , յո՞ գնաս . ո՞չ գիտես
զի թշնամիք գոռո՞ տուեալ զեղան ի քաղաքս :

Երգ . Ա՛հ , դառն յիշատակ , հեռացայց ի տանէ
անտի , յո՞ փախեայց . յո՞ երթայցեմ զիս ընդ
իս տանիմ . արիւն որդւոցս զինեւ մածեալ կայ-
ան , որդեակք իմ , ես սպանի զձեզ . հայր ձեր կո-
տորեաց զձեզ , նա զարիւն ձեր ընդ արեան մարցդ
խառնեաց : Ո՛վ գահ թորգոմեան , արգ յամօթ
եղեր , արգ Մար դք անաղզի աղտեղէ զքեզ , ի
քեզ բարձրացի : Ո՛վ իմ գաստակերտ Երուան
դաշտ , վասն Մարի միոյ և յեղուզակի կանգնե-
ցի զքեզ . չկարացի փրկել զքեզ . ոչ ես , ոչ ,
այլ ամբոխն մոլեգին մասնեցին զքեզ . պահա-
պանքն քո նենգեցին ինձ և քեզ : Ո՛հ , զիմորդ ի
զայրոյթ սրտին մռնչէ քաղաքս . ձայն լսեմ , ձայն
յանգնգոց դղրդէ զաշտարակս իւր , և զերկնա-
բերձ գլուխն շարժէ բարկութեամբ . տապալեաց
անկիր ի վերայ թշնամեացդ , և զիս ընդ նոսա . . .

Երգ . Յայլոյ խելս է , ցնորի . ինայեա ի կեանս
քո գիւցաղունդ . նեաք և նիզակք շուրջանակի
ընդ օդս խաղան :

Երգ . Ուր իմ մեռաւ թագաւորութիւն , զիմորդ
ես ի կեանս ինայեմ . ուր եղբայրասպան սու-
սերս յայնչափ անմեղաց ի սիրտ մեղեաւ սիրա-
սուն որդւոցս իմոց և մարց սիրելեաց , զիմորդ
յայս սիրտ անխայէ : Անկայց ես ի ձեռս թշնամ-
ւոյ իմոյ Արտաշիսի , խրոխտն Սմբատայ . և դու
արիւն իմ , իմա Երուազ , ա՛հ , ներեա ինձ , զի այս-
պէս անապան ծանեայ զքեզ . կամիցին գու տալ
զկեանս քո սրոյ բռնաւորին զիշատել զքեզ . մի-
թէ վատասիրտք իցեմք մեք քան զկանայս և ըզ-

մատաղ մանկաի, որ կամակար մեռան առաջի ա-
չաց մերոց: Հապա Երուսաղ, աւասիկ քեզ սու-
սերս: Ընտրեալ դու քեզ մահ քաջութեամբ,
կամ ինքնին գնալ զիւրովին, կամ ես այժմ սպա-
նից զքեզ և զիս 'ի վերայ քո. ոչ թողում ես և
ոչ չիթ մի յարենէ իմէ հեղուլ 'ի ձեռաց ասե-
լեացս. տեսցեն զմեզ ինքնակամ քաջութեամբ
անձնամահ եղեալս. աղէ, զի գանդաշէս:

Երգ. Ահ, եղբայր իմ, մադիւր մեռանէի, միայն
թէ դու մնացես կենդանի. այլ սիրտ իմ ոչ ըն-
տրէ մեռանել 'մինչ զմահ իմ և քեզ առիթ տե-
սանէ մահու. թոյլ տուր ինձ պաշտպանել կե-
նաց հարազատիդ, եթէ աստի յուսահատ եղէց,
յայնժամ մեռայց, մի երկնէիր քաջութեամբ
մեռայց:

Երգ. Պաշտպանել համարիս դու ինձ պահելով
կենդանի 'ի ձեռաց թշնամւոյն. ո՛հ վատութեան
բարբառ: Եւ ինձէն ես սստէն մեռայց. ո՛ այն
որ ապրեցուցէ զիս: Ոգիք ընտանեաց իմոց սի-
րելեաց արդ զին և պատին. տեսիլ ահարկու. ա-
ւասիկ Տուր պարագլուխ է նոցա. աւաղ, զի
ինդրեն. դադարեալ, Տուր. տեսի, արդ շատ է.
զի ևս ցուցանես ինձ զպատառուած վերիդ, զա-
րեան ճաղաղիս. ահ, երեսք քո և մարմնք յա-
րեան շաղախեալ, աչք քո կկոցեալ շանժա ար-
ձակեն, հրաշունչ մորիկ ընդ քիթս և բերան
գունդ գունդ փոթորկեն. զվրէժ արեանդ խն-
դրես. դադարեալ, աւասիկ եմ ես. (Կաթիւ
նէլ. Երուսաղ արգելւ): Ձիւրդ, ո՛չ տաս թոյլ. դու
ինքն գաս հանել զվրէժդ, աղէ փութա. տակա-
ւին յամես տանջել զիս յերկար. ոչ, հարից մը
խեցից. նոյն ձեռն որ զսիրտ քո անողորմն պա-
տառեաց, նոյն և զվրէժ քո լուծցէ. բաբէ,
սինչ այս յեղակարծ երկիւղ. ո՛ւր արդեօք իցեմ,
սիրտ իմ, բաբախէս. ձեռն իմ անասան յարիւն
հարազատիդ 'արդ 'ի վրէժ նորին գողգոթն. այ
վատութեանս. հապա...

ՏԵՍԻԼ Բ.

ՄԻՋԻՐԱՆ, առաջինըն:

Միջ. (Եկեալ գափապաւ). Ձի գործես, տէր ար-
քայ. մինչ ես այսրանդր ընթանամ ապրեցուցա-
նել քեզ, դու ինքնին անձինդ առնես: Սմբատ
և Արգամ մոլեալ յանկարծ հարկանեն աստա-
կեն առաթուր կոխեն զգիմակացն ամենայն.
քաղաքս ամենայն խոնարհեցաւ ընդ ձեռամբ
յաղթականացն: Արգամ՝ մուրացեան վաշտի-
նաւ խորտակեցին մոխի 'ի բանտ, և տեսեալ
զարիւն Տուրայ՝ ոստեաւ Արգամ, իբրեւ նետ 'ի
միջոյ գնդին թռեաւ զհետ քո, այսր անդր մորիկ
սատակել զքեզ. և քո Երուսաղ Սմբատ զհետ
դարանի. Մարն այն Արտաշէս արքայաբար քա-
ջութեամբ արամբ քանի մի հրաման արձա-
կեաց արազ առ ինքն հասուցանել զաւետիս
սպանման ձերոյ, և արդ այժմիկ այսր գիմեալ
գայ. աղէ իմայնցէք յանձինս ձեր, ամիսցա-
րուք 'ի միջնաբերդն ընդ երկգիմի աստիճա-
նան, և արկցուք զդրոնան երկաթիս:

Երգ. Այ վատք անարժանք, գուժորեցայք 'ի
վերայ իմ աղերսել զիս 'ի վատութիւն. ո՛ւր իցէ
Արգամ. ահ, հայր իմ Արգամ, քո միայն անձուկ

լուծանէ զձեռն իմ. թող եկեսցէ Արտաշէս. պա-
տեսցին զին և փաղանգք թշնամւոյն, տեսցեն
զիւրդ քաջութեամբ մեռանի Երուսաղ. աստ
գտցեն զգիմին իմ. աւաղ, զիւրդ 'ի բանտ արի,
և 'ի գործս վեհերոտ գտանիմ. որչափ խտիր է
ընդ խորհուրդ և ընդ գործ: Այո, հայր իմ, քո
յիշատակ լքուցանէ զիս. եկ առ իս, մատիր առ
եղբայրասպան որդիս, աստ եմ ես. զի ընդ այլ
որոնես. եկ եղբայրասպանն անկցի 'ի սրոյ հօրն.
քո միայն սրոյ արժանի եմ ես. մի անգամ տեսից
զքեզ, համբուրեցից ընդ քեզ, ողորեցից զերեսս
քո, ընկալայց ներուսն մահու հարազատիս, և
մեռայց 'ի քէն. դու ինդրեալ զվրէժ Տուրայ. ա-
ղէ տարայք զիս առ հայրն իմ, առ հայրն իմ եր-
թայց. ոչ ևս կարեմ յամել 'ի կեանս. ահ, հայր
և որդիք և եղբայր զսիրտ իմ կեղեքեն:

Երգ. Արտաշէս այսր զիմեալ գայ, փութա աճա-
պարեա, գիւցաղունդ...

Երգ. Արտաշէս, է, թոյլ տուր ինձ պատահել
նմա. հարից սատակեցից զՄարն զայն անագի.
սիրտ իմ ոչ ներէ. առ հայրն իմ, առ հայրն ա-
ղէ երթիցուք. հասանեմ հարկանեմ պատառեմ
առ նա. ո՛հ քաղցր մահ, 'ի սրոյ հօրս անկանել.
(Ելանէ Երուսաղ և Միւրա):

Երգ. Միհրան արկ զգա 'ի բերդն. զի գործեցից.
Արտաշէս մերձեցաւ, յայտնեցից զամենայն. ո՛
գիտէ թերեւ ներեսցէ:

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐՏԱՇԵՍ զօրականօք, ԵՐՈՒՍՁ:

Արտ. (Իշխանաբար առ Երուսաղ) Տուր 'ի բաց ո՛ դու,
զսուսերդ. առէք կապեցէք զգա:

Երգ. Ի բաց կայէք. քեզ միայն, գիւցաղունդ,
քեզ տամ զսուսերս, քոյին ձեռամբ սպանանել
զիս:

Արտ. Ձեմբ այդչափ արիւնախոնձ, զի և զառ մեզ
նուաճեալսն սպանանել. կեցցես, մի ինչ զան-
գիտեր:

Երգ. Եթէ զանգիտեալ ինչ էր, կարէի և վայրիկ
մի երկարել զկեանս. այլ արդ կամակար ընտրեմ
մեռանել:

Արտ. (Մէկտալ). Ոչ յաննշանից ոմանց է սա: (Առ-
Երգ). Մի անգամ ասաց բերան իմ կեցցես, ոչ
երկրորդեցէ. ամենեցուն ձեզ շնորհեալ արեւ,
միայն արիւն Երուսաղայ և Երուսաղայ բոլորեա-
ցին 'ի զարդ անթառամ պսակիս:

Երգ. Ահ գիւցաղունդ, ես ինքն և փոխանակ Ե-
րուսաղայ կամի մեռանել. ինայեա 'ի բաղդ նո-
րա. ոչ գոյ նորա այլ ճեա կամ արիւն, զամենե-
սին առ յուսահատ գաղանթեան կոտորեաց.
արքունիքն բոլոր յարիւն լուղին, գիականց է
գերեզման. ես միայն կամ, արիւն իմ ոչ շատ ի-
ցէ 'ի նկար դաբնեաց ճակատուդ, կամ թէ
գարջիս յարենէ աստի եղբոր արքայի. ես եմ Ե-
րուսաղ եղբայր Երուսաղայ:

Արտ. Դու ես Երուսաղ. և տակաւին կենդանի կաս
առաջի իմ, տաճարակապուտ գից և քրմու-
թեան. եթէ քաղաքս ներեաց յանցուածոյդ,
Արտաշէս ոչ ներէ. մեռցիս, անորէն. մեռցի և
եղբայր քո. զձեզ զերկոտեան ձնեմ պատարագ
ոգուց իմ եղբարց մանկանց անմեղաց՝ զորս կո-

տորեաց Երուանդ: Ա՛հ, եղբայրք իմ նազելիք, բողոք արեան ձերոյ արդ եհաս յունկն աստուածոց. այժմիկ խնդրեսցի վրէժ ձեր: Տակաւին և արիւն որդւոյն Արգամայ բարդէ 'ի բանին ըզծուի յանցանացդ. յեթերս վերին, և դուք կեանս յինէն պաղատիք. միթէ ո՛չ առից ես ըզվրէժ Արգամայ:

Երջ. Ո՛հ տխուր յիշատակ. հապա խնդրեսցի վրէժ միոյ որդւոյն Արգամայ՝ մահուամբ երկուցն ևս: Երգուեալ յարե զիւցաղինդ, Արտաշէս, մեք եմք սպանողք Տուրայ, մեք և նորա եղբայրք. Տուր եղբայր մեր էր, և մեք որդիք Արգամայ երկուք զոր 'ի հարուստ ամաց մեռեալ համարիք:

Արս. Բա՛բէ, ո՛ր անլուր աղէտք. դուք որդիք Արգամայ. աղէ փութասցուք խափանել զԱրգամ. ո՛հ թերեւս արդ գործն վճարեալ իցէ. պնդեաց, զի՛ յապաղես. եղբայր քո անկանի սրով Արգամայ:

Երջ. Երուանդ աստի 'ի միջնաբերդ անդր անկաւ. ես նախ մեռայց աստանօր. հապա, սպան զիս:

Արս. Քա՛ւ յինէն միւս զձեռն յորդի Արգամայ. երթիցուք արգելուլ զնա. զուր. Արգամ 'ի միջնաբերդի անդ Երուանդայ դարանեալ կայր մռլէգին. արդ գործն կատարեալ է, արդ Երուանդ յարեան իւրում թաւալի:

Երջ. Ա՛հ եղբայր իմ, ես ընդ քեզ մեռայց. երթամ 'ի խառն ամբոխին պատահել մահու. միդ խնայեսցէ յիս, մի դք ներեսցէ. (եւանէ):

ՏԵՍԻԼ Դ.

ԱՐՏԱՇԵՍ:

Կաց մնա, պնդեսցուք զհետ. (չարձի եւ դառնայ). ա՛հ, զինչ առնել իցէ, ո՛վ գիք. ապրեցուցից զարիւն Արգամայ իմ բարերարիս, զթշնամիս իմ զարիւնարբու գահիձն եղբարցս իմոց. ո՛վ չաւրաշտք բաղդ, զիւրդ 'ի խրախամիտ ժամու վրիժուցս՝ զթշնամիսն իմ յայանեցեր ինձ որդիս Արգամայ. զիւրդ պատմեցից նմա. սակայն միթէ ո՛չ ստեաց ինձ Երուազ. պատիւր յոյս. այն բանք ոչ նենդաւորի էին. չեմ ինչ անծանօթ բաղդին Արգամայ. եցոյց ինձ զամենայն Սմբատ. և զի Տուր կենդանի գտաւ, կենդանի էն և երկուքն...

ՏԵՍԻԼ Ե.

ԱՐԳԱՄ, ԱՐՏԱՇԵՍ:

Արգ. Ահաւասիկ, տէր արքայ, արիւն թշնամւոյդ: Արս. (Դարձադէպ վերես) Ո՛հ արիւն. 'ի բաց տար յաջաց իմոց:

Արգ. Ոչինչ անիրաւիս, դիւցազունդ, և ես ինքն զահի հարեալ եմ և դողամ. ոչ գիտեմ զինչ է որ զսիրտ իմ հարկանէ, և պաղ ցրտագին յերակունս իմ սողոսկեալ զեռայ. զիւրդ ցնծու թեամբ գիմեցի, և զիւրդ երերեալ դառնամ. ներեա ինձ, դիւցազունդ, եթէ ոչ բաւեմ որպէս պարտն է խայտալ յարիւն թշնամւոյդ և անողորմ դահձի որդւոյս իմ Տուրայ: Անգատին 'ի սկզբանէ գուր ի սէր ունէի առ նա. ոչ գի-

տեմ որպէս սիրա իմ 'ի ծածուկ կապեալ էր ընդ նա. պատկառէի 'ի գթոյս, այլ ոչ զօրէի ատեւ զնա. մահ որդեկիս խղեաց զամենայն կապանս սրտի. ո՛վ բանդ արիւնաշաղախ. ա՛հ, որդեակ իմ Տուր, յիշատակ քո դարձեալ վառէ յիս զոգիւս, խնդրեսցի զվրէժ քո...

Արս. Ո՛րպէս... կամ ո՛ւր գտեր գու... զԵրուանդ... ոչ ինչ բարբառեցաւ նա առ քեզ:

Արգ. Իբրեւ մաի ես ընդ դուռն բերդին, տեսանեմ զի գայր նա զայրագին յոտից մինչև ցգրուիս արեամբ ուռցեալ. իւրքն զնովաւ պատեալ արգելուլ ինչ խափանել ջանային զնա. նա վազէր մունչէր յարձակէր. «Նենգաւոր, լապտ, անախտ, զիս 'ի դէպիւր քեզ. առ Արգամ, առ Արգամ» գոչէր: Ահաւասիկ քեզ Արգամ կրկնեցի անդուստ, և զյարձակելն և զպատառել և զհարկանելն մի առնէի:

Արս. Ո՛հ:

Արգ. Գլորեցաւ անկաւ չուառականն յոգւոյ հանելով. ա՛հ Արգամ կարդաց. այլ ինչ ոչ գիտեմ, թո՛ղի և թո՛եայ տագնապաւ: Իմ էին ոմանք որ զհետ պնդէին աղաղակաւ, այլ ես աստ եմ առաջի քո, աւետել քեզ. ամենայն թշնամիք քո եղիցին իբրեւ զԵրուանդ: Իսկ զիւրդ, արտաւսուէս գու, արքայ, զմահ թշնամւոյդ. թոյլ տուր ինձ սլանալ յերկրորդ մրցանակ. մինչև զարիւն Երուազայ խառնեմ ընդ եղբօրն 'ի սուսերս յայս, յայնժամ ցնծասցես:

Արս. Անոա, ո՛վ թշուառական ծնող, զի՛ գործես. մի և մի դք 'ի թշնամեացս եղիցի իբրեւ զԵրուանդ. մոլեալ ես յարիւն որդեկացդ, թշուառացուցիւր և զիս, Արգամ. Երուանդ և Երուազ որդիք քո են. նա ինքն Երուազ երգմամբ երկրորդեաց ինձ աստանօր. յիշեա առաջինն, և ոչ ինչ երկմտեսցես. ո՛ւր իցէ Երուանդ, ես առ նա երթամ. (եւանէ զբախտօք):

ՏԵՍԻԼ Զ.

ԱՐԳԱՄ:

Երկինք, որ շանթ էր որ եհար զիս. զիւրդ պատառեցիք զքօղն որ յամաց հետէ իջեալ կայր զարտեանամբքս. Երուանդ և Երուազ որդիք իմ. ո՛չ յարգանդէ 'ի գերեզման վճարեցան սոքա. զինչ էր որ գործեցաւ. յոր արիւն միւս գաւ սրտմտութիւն իմ. ա՛հ Տուր, Տուր, մեծագնի եղև վրէժինդրութիւնք ինձ. ո՛վ բաղդ անակուն կալ զինչ այլ աղէտք անհնարինք ինձ գանձեալ կայցեն. հապա, երկին, թօթափեա յիս զամենայն. աստ առ ետեղ յաճիւն զիս դատեալ կամ թէ վիհք յանդնոց բերանացին կլանել զիս կենդանւոյն: Ընդէր ծածկեցիք զայդ յինէն, որդեակք իմ...

ՏԵՍԻԼ Է.

ՍՄԲԱՏ, ԱՐԳԱՄ:

Արգ. Սմբատ, զի՛ գործեցաւ ընդ Երուազ. եթէ կենդանի իցէ. նոքա իմ են որդիք:

Սմբ. Ներեա ինձ եթէ անգիտութեամբ ինչ յանցեայ առ քեզ, զի անապան գիտացի. գոնեա փութասցուք ապրեցուցանել զԵրուանդ:

Արգ. Դու յինէն խնդրես ներումն, ես յումմէ՛ խնդրեցիք: այս սուտեր, այս բազում պատահեցին զսիրտ Երուանդայ:

ՍԹԲ. Աւաղ, յաղթութիւնս մեր՛ի սուգ կործանեցաւ:

Արգ. Զի եղև Երուաղ, Սմբատ, եթէ կենդանի իցէ:

ՍԹԲ. Յանկարծ. այլ սպանաւ և նա. և արդ լուզի յալիս Ախուրեան՝ արեամբ գունելով զերեսանորա. ինքնին նա անձնամատն եղև. մինչ մէք յուզէաք զնա, եհաս գուժելով. աւասիկ աստ է ձեզ Երուաղ, մի խնայէք. և դունդն մոլեկան հարթաւալեցոյց զնա՝ ի պտոյս մի գետոյն:

Արգ. Ո՛հ եղուկ զինև. յաղթեցեր աւասիկ, անա գորոյն երկինք, յաղթեցեր. ի միում աւուր՝ ի միում ժամու յերեցունց որդւոցս միանգամայն զրկեցաւ. անօրէնութեամբ ծնան, անօրէնութեամբ և կորեան:

ՏԵՍԻԼ Ը.

ԵՐՈՒԱՆԻ, ԱՐՏԱՇԷՍ, ՍԹԲԱՏ, ԱՐԳԱՄ:

Երգ. Առ Արգամ, առ հայրն իմ. ի բաց կաց յաչաց իմոց անօրէն բռնաւոր. հասեր մտեր հինաբար, յափշտակեցեր զգահ Հայկազանց, զգահ Երուանդայ:

ԱՐՏ. (Տայ Վեհալին Երազանայ Երգամ). Սակայն ոչ խնդամ ի ստացուածս. դառնացաւ ինձ ամենայն. եկ հաշտեաց ընդ իս, մի ընուր անիծիւք զարքայութիւնս իմ, մի զկեսանս իմ արհաւրպէ մահու. թոյլարա պատել զվերդ, և պահել գոնեա հօր քու՛մ զոգիսդ:

Երգ. Պատառեմ կեղեքեմ զվերս զի վաղ մեռայց. գիտեմ զի հնարիս արգարանալ, ջանասցիս մինչև յոյժ քերել յանձնէ զկեղտ աւազակութեանդ, այլ տիեզերք ամենայն գոչեցեն: Ռամիկն իբրև եղեգն ի հովմոց այնպէս տատանի. զթագաւոր զոր ատեայր կենդանի՝ մեռեալ պաշտեցէ:

ԱՐՏ. Զիք հնար զիջւցանել զնա ի յամառեալ անգութեանէն:

Երգ. Ոչ զիջանիմ ոչ, բռնաւոր բարբարոս. յաղթեցեր բազկիս, ոչ յաղթեցես սրտիս. ոչ որ ի տանէ իմմէ անկաւ ի սրոյ քումմէ. ոչ յաղթեցեր մեզ. մէք մեղէն հարաք զմիմեանս տոհմաւ. հայր զորդի և եղբայր զեղբայր կոտորեցաք. և արդ ինդութեամբ մեռանիմ. ուր իցէ Երուաղ, եթէ մեռաւ և նա քաջութեամբ:

ՍԹԲ. Քաջութեամբ, ինքնակամ մեռաւ:

Երգ. Ո՛հ, արդ մեռայց, կեցի շատ:

Արգ. Ա՛հ որդեակք իմ, արութեամբ մեռարուք. այլ սպանէք և զիս զհայրս ընդ ձեզ. և Երուաղ զիմադրաւ գիմեաց ի սուր Սմբատայ:

Երգ. Ի սուր Սմբատայ. ո՛հ, ապա ի նոցանէ անկաւ, այ՛ դադանութեանս. բարբարոս յելուզակ. ուր իցէ Սմբատ, տակաւին կենդանի. գիւթեցան և երկինք, սխալեցին բառնալ զամբարիշտս յերկրէ:

ԱՐՏ. Մինչև ի մահ երգուեալ ի հաստութեան կայ:

ՍԹԲ. Աւասիկ է Սմբատ առաջի քո. ներէ քեզ և այժմիկ միայն քաղցրութեամբ ներէ զամենայն թշնամանս: Ներեա և դու Արգամ զանգի-

տութեան մեղանս. զի այսպէս մանկազրաւ որդեկոտոր զքեզ արարաք:

Երգ. Աստ ես գու, ժպիրհ ժանդաժուտ. ա՛հ, ոչ զօրեմ: Մի ներեր, հայր, մի ներեր նոցա, այլ ինձ ներեա եղբայրասպանիս. ես սպանի զՏուր, ես սպանի զորդիդ քո՝ զեղբայրն իմ. քաւեա զիս:

Արգ. Ա՛հ, որդեակ իմ Երուանդ, ամենեքին կարօտիմք ներութեան. ներեսցուք միմեանց, ներեմք քեզ զամենայն, և դու ներեա ինձ, Երուանդ. հայր քո շաղախեցաւ յարիւն քո, ոչ անապանեցիք և ես զկնիք. երկիր ոչ բերէ բառնալ զիս:

ԱՐՏ. Ո՛վ սգալի տեսարան:

Երգ. Մի հայր, մի, այլ կաց կենդանի, յիշատակ չարեաց մարդագաւ յելուզակին. և եթէ երբէք յիշեսցես զԵրուանդ, կաթի միոյ արտասուաց արա արժանի զտապան մահուն: Բարեւարութեան էր արդ՝ զի դու, հայր իմ, սպաներ զիս. ոչ անկայ ի նմանէ, ի Սմբատայ Երուանդ ոչ անկաւ: Եկ, հայր, տուր ինձ զհամբոյրդ վերջին, և խնդութեամբ մեռայց... աչք... իմ խաւարին... գիշեր աղջամուղջ... պատեցաւ զինև:

Արգ. Առ ընկալ զհամբոյրս որդեսպան ծնողիս. հայր քո է զորով փարեալ կաս, թշուառական ծնողդ. ա՛հ, յոր վայր հասուցին զիս երկինք:

Երգ. Ո՛վ քաղցր համբոյր... արդ մեռանիմ... աւասիկ:

ԱՐՏ. Միրա իմ գելանի. ոչ մեռաւ ոչ. իբրև իմ թշնամի ոչ մեռաւ Երուանդ:

Արգ. Արդ թագաւորեցեր, տեր արքայ. արդ բարձին երկինք զթշնամիս քո յերեսաց քոց. ոչ կարեմ բողբեւ. անկան որդիքս ի փառս յաղթանակիդ, թող անկցի և հայրն, զմիմեանց վրէժ խնդրեցաք. ես միայն ծնացի. խնդրեսցի և յինէն վրէժ. (Իսկ հարկանել զինն):

ՍԹԲ. Զի գործես:

ԱՐՏ. Կարձեա զձեռն քո. մի թէ ոչ շատ իցեն արիւնք որ հեղան ապականել շաղախել զգահս արքունի. ոչ գիտէի եթէ յարիւն այսպիսի գուռնեսցին ինձ ծիրանիք արքայի: Պահեա դու ինձ զքեզ, Արգամ, դու ես հայր իմ այստէհետև. փոխանակ որդւոցդ ես եղէք քեզ որդի և ամենայն տուն իմ. քո է և գահն երկրորդ առ ինև: Որդիք քո իմ են արիւն. իբրև զմի յեղբարցս իմոց պատուեցիք զնոսա զարմ արշակունի, և աչք իմ ցօղեսցեն արտասուս նոցուն դամբանի:

Երգ. Աչք իմ... խնդրեն... դարձեալ... լոյս... ո՛հ... շունչ վերջին... Երուանդ... մեռանի:

ՎԵՐՋ

ԹՂԹԵԱՆՆ

Ա.

Երապոն յանախտանուէր կոռից՝ որդոց իմոց սիրելեաց Երուանդայ և Երուաղայ:

Զառ ի հերուն հետէ յիմ մայրենի սրտի ծածկեալ խորհորդ մահ պառաւոյս բռնաւ առնէ մերկանալ ձեզ: Որդեակք իմ էք դուք, զոր ընկալայ ի սուտանուն Մաժանայ Վիշապազանց (որ որ-